

ազատէ այն նեղութիւններէն, ուր դուք կը նետուիք կամակոր կերպով: Դուք Անգլիայէն մեկնեցաք, որովհետեւ ապահով չէիք: Եւրոպայէն մեկնեցաք, որովհետեւ ձեր հարստութիւնը փոքր էր, իսկ այժմ դուք ոչ վախ ունիք եւ ոչ ալ ցանկութիւն: Ուրեմն, դուք ինչո՞ւ համար Հնդկաստան կ'երթաք: Այս հայը հայրենիք չունի եւ ատոր համար իսկ լաւ կ'ընէ ամէն երկիր իրը նկատելով: Մինչդեռ ձեզ համար նոյնը չէ, դուք պէտք է ասիկա գիտնաք, եւ լաւ ի դորձ դնէք: Մինչ ես կը կարծէի թէ ձանսրնի ըսածին վրայ կը խորհէի, արթնցայ շփոթած եւ յուզեալ: Եւ շատ կը տարակուսիմ, որ խելքս գլուխս ըլլար: Վեր ելայ, ինքզինքս յանձնեցի այն միջոցներուն, որոնք երբեք անյաջող չեն Աստուծոյ վստահող մարդկային ոգին խաղաղեցնելու համար, եւ առաւօտուն ինքզինքս ամփոփեցի վերադառնալու հաստատուն մտադրութեան վրայ, եթէ ատիկա գործնականապէս կարելի ըլլար, Անգլիոյ մէջ հանգարտ եւ քաջուած կեանք մը ապրելու նպատակով:

«Քանի մը օր վերջ վենետիկեան հիւպատոսէն ծրար մը ընդունեցի, որով ինձի կը յայտնէր, որ շուտով նաւ մը Արչեսէն Ռօզէրա պիտի գար: Նաւապետին ուղղեալ իր յանձնարարականին շնորհիւ, որ ծրարին մէջ ներփակեալ էր, դուցէ կարենայի այդ նաւուն վրայ ապահով եւ հանդիստ Լիվոռնիա երթալու տեղ գտնալ: Այդպէս ալ կատարուեցաւ: Նաւը նոյն շարթուն մէջ հասաւ եւ քանի մը օր վերջ մեկնեցաւ, առանց ճամբորդի, բացի Մինիօր Եփրեմէն, իր ընտանիքէն եւ ինձմէ: Մեր նաւազնացութեան միջոցին առանձնայատուկ բան մը չպատահեցաւ, բացի Հրեայ բժիշկին հիւանդանալէն: Եւ եթէ մենք նաւահանգիստ չհասնէինք հասած ատեննիս, ան հաւանարար մեռած պիտի ըլլար: Իրեն օգնեցի կարողութեանս չափով: Սակայն, քանի որ ան մեր շինած մասջուրէն չէր խմեր (Հրեայ կրօնական օրէնքին պատճառաւ՝ Յ. Ք.), ես չէի գիտեր թէ անոր համար ուրիշ ի՞նչ կրնայի ընել, մինչեւ որ խորհեցայ հաւու մսի ջուր տալ, որ-

մէ մաս մը խմեց երբ տեսաւ, որ Փրանսացի խոհարարը հաւուն գլուխը կտրելէ վերջ արիւնը քամեց (ըստ Հրէից օրէնքին՝ Յ. Ք.): Ատկէ վերջ քիչ ինչ դժուարութեամբ խմեց հաւու ջրապուրէն, այդպիսով պահեց իր կորովը եւ իր կեանքը փրկեց: Ան շատ պատուաւոր մարդ մըն է, սակայն, ամենաարտակարգ կերպով աւելորդապաշտ, Հրէական յամառութեան հետ ունին եւ Սպանիական բոլոր ունայնապաշտութիւնը: Մինեօր Եփրեմ գրեթէ ամէն բանի մէջ անկէ (Հրեայ բժիշկէն) կախեալ էր եւ, իրաւամբ, որովհետեւ ան, արգարեւ, ճարտար բժիշկ մըն էր մեծ առաքինութեամբ, որուն համար Սպանիացի Հրեաները՝ դուցէ Սպանիացի ըլլալուն համար՝ բարձր կերպով գնահատելի են»։¹⁷⁾

Պրաուն, Լիվոռնիա հասնելէն վերջ, կը գրէ .

«Լիվոռնիա վերադառնալէս քիչ ժամանակ վերջ, Մինեօր Եփրեմի հետ խօսակցութեան ատեն պատահեցաւ, որ գոհարներու այդ ատենուան գիները նիւթ դառնան մեր տեսակցութեան: Ատոր վրայ ան ինձի հարցուց թէ երբեք առաջնակարգ գոհարներ տեսած էի, որոնք նոյն ատեն շատ ալ խոշոր էին: Աւելցուց թէ վերջերս Ֆրանսա գրկած է գոհարներ, որոնք ամենաբնտիր գոյներ ունէին ցարդ Եւրոպա բերուածներուն մէջ: Ատոր վրայ, իմ խնդրանքիս անտալով, ան ինձի ցոյց տուաւ նմուշներ, որոնց մէջ կային Սաֆայիրներ՝ կապոյտ եւ սպիտակ, որոնք իր հաւաստման համաձայն շատ արտակարգ խոշորութիւն ունէին եւ անսովոր կերպով զեղեցիկ էին: Գալով գմբուխտներուն, զոր արդէն զրկած էր, իմինէս շատ վար գատեցի եւ իրեն ալ ըսի: Ատոր վրայ ան ուղեց իմ գմբուխտներս տեսնել: Իրեն ցոյց տուի եօթը հատ՝ իմ ունեցած չորս խոշորագոյններս վերապահելով ուրիշ առիթ իմը: Ծատ անկեղծօրէն ըսաւ, թէ իր տեսածներուն մէջ ընտրելագոյններն էին, թէ

17) The Travels of Edward Brown Esq.:— London, 1733, Vol. II, pp. 292-299: